



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 25 » սեպտեմբերի 2019 թվական

N 108

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 5-6-ը ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում: 2019 թվականի սեպտեմբերի 9-ին կազմվել է հողերի օգտագործման և պահպանման խախտումների N 15 ակտը: Ստուգման արդյունքում պարզվել է, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Սլավիկ Նիկոյանի սեփականությունը հանդիսացող 0.1353հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասում առանց որևիցե օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության կառուցվել և գործում է խանութ (սուպերմարկետ): Համայնքի ղեկավարի կողմից վերոնշյալ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ փաստաթղթերը չեն ներկայացվել: Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի (Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ) և 2-րդ կետի (Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ), պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի N15 որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածով,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանի (ծնված՝ 1952թ.) նկատմամբ կիրառել վարչական տույժ 150000 (հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջեի 900005001517 հաշվեհամարին (Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաշվեհամարին):

2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանին ամենասեղմ ժամկետում վերացնել Հողերի օգտագործման և պահպանման վերաբերյալ հայտնաբերված խախտումները:

3. Սույն որոշումը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի ղեկավար Անդրանիկ Պապիկյանին հանձնելու պահից, որը կարող է բողաքարկվել դատական կարգով՝ 15 օրվա ընթացքում:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետին՝ Աշոտ Դավայանին:

9/25/2019

X 

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713



Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ